անքները՝ այդպես էլ ճանաչելով այդ մահացու մեղքի առկայությունն իրենց սրտում: Եւ պատահաբար չգործածեցի «հոգեպան» բառը. բանն այն է, որ ցանկացած մեղք, մեզ հեռացնելով Աստուծուց, մեր հոգեւոր մահն է կրում՝ լինի դա մարմնական թե հոգեւոր ուղրտի մեղք: Ազահուրություն էլ, որ ընկալաբարության եւ նյութապաշտության գոեկազույն դրսեւորում է, «դրամի եւ ունեցվածքի անկարգ բաղձանք», ունենալով մարմնական սկզբ, իր կործանարար անդրադարձն է դրոշմում առավելաբար մեր հոգիների, հոգեւորի վրա՝ դրանով իսկ մեր միջոց չընդուն նմանությունն ու պատկերն Աստծու: Եվ իհարկե, երից ճշմարիտ են եկեղեցու հայրերը, երբ այն համեմատում կամ նույնացնում են կոապաշտության հետ, որին, ի դեպ, ոչ պակաս չափով հակված է այսօրվա կուրությունը: Ավելին՝ ունեցվածք կուտակելու, հարստանալու ձգտումը մեր օրերում նույնիսկ առաքելությանը համարժեք մի բան է համարվում, մասնավորապես որ այսօրվա խիստ աշխարհայնացած մտայնությունը բացեիքաց ցույց է տալիս եւ նույնիսկ գովազդում դրան հասնելու «օրինական» ճանապարհները: Ցավոք, այդ տխուր «առաքելություն» մեջ իրենց ծանրակշիռ տեղն ունեն գանգվածային տեղեկատվության միջոցները՝ բոլորն անխտիր՝ ռադիո, հեռուստատեսություն, մամուլ, համացանց, էլեկտրոնային փոստ...

Սակայն, հայր սուրբ, մի՞թե միանշանակորեն դատապարտելի է հարստանալու ձգտումը, չէ՞ որ նյութական բարիքներ ստեղծելու եւ ձեռք բերելու մղումը նպատակաւորված է նաեւ մարդկային ամենապարզ ու առաջնային կարիքները հոգալուն:

Սա շատ նորը հարց է: Շատերն են այդպես մտածում, բայց... եկեք չփորձենք:

Ամբողջ խնդիրն այդ բարիքների հանդեպ չափի զգացողության, եւ կասեի՝ չափավորության գիտակցության մեջ է: Ըստ Սուրբ Գրքի եւ եկեղեցու վարդապետների՝ անհրաժեշտից ավելին ունենալու տենն անհագությունն է եւ չարիք: «Ունենք կերակուր եւ հանդերձներ ու դրանցով էլ բավարարվենք», - ասում է Պողոս առաքյալը եւ ավելացնում, «Բոլոր չարիքների արմատը փողատիւրությունն է, որին ոմանք ձգտելով՝ մոլորվեցին հավատից եւ իրենք իրենց գցեցին բազում ցավերի մեջ» (Ա Տիմոթ. 2 8, 10): Եվ եկեղեցու հայրերն են պնդում, որ անհրաժեշտից ավելին տենալով չարիք է: Սակայն ամենազգուշարն էլ հենց անհրաժեշտի ու ավելորդի սահմանագիծը ճանաչելն է: Իսկապես, այնքան էլ հեշտ չէ հասկանալ՝ որտեղ է վերջանում անհրաժեշտը, եւ որտեղ սկսվում ավելորդը՝ չարիքը: Ամենազգուշարը ճիշտ պահին ինքն իրեն «կանգ առ» ասելն է: Բայց արդյո՞ք շատերին է դա հաջողվում: Ցավոք, ավելի հաճախ ազահուրության անտը քողարկվում է ընկերային եւ բարոյական բազմապիսի պարտականությունների վարձագրով՝ ընտանեկան, ընկերական, նույնիսկ ազգային, որոնք իսկապես էլ նյութական բարիքներ են պահանջում: Սակայն շատ շուտով նյութական բարիք ձեռք բերելուն ուղղված աշխատանքը, այդ բարիքների հանդեպ չափավորության գիտակցություն չունենալու պատճառով, վեր է ածվում միայն ավելի ու ավելի շատ բան ունենալու, կուտակելու նպատակի, որը երբեք վերջ չունի: Չի էլ կարող վերջ ունենալ, քանի որ միշտ էլ իր «արդարացում» ունի հենց հասարակական կոլեկտիվի գիտակցության մեջ, չէ՞ որ շատերի համոզմամբ՝ հարստությունը մեծ հնարավորություններ է ստեղծում մարդկանց իսկ բարոյական համար: Հարուստ եւ ունեւոր մարդիկ հար-

գանք են վայելում հասարակության մեջ, մանավանդ երբ հայտնի են դառնում որեւէ բարեգործությամբ՝ երբեմն նաեւ անկախ այն բանից, թե ինչ ճանապարհով է ձեռք բերվել այդ հարստությունը:

Շարունակությունը՝ էջ 7



ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ ԳՐԻԳՈՐ Զ ԱՊԻՐԱՏ (1194/1195-1203)



Սկզբը՝ էջ 5

Լեւոնը թագադրության գործը կազմակերպելու համար Սսի արքեպիսկոպոս Զովհաննեսին ուղարկեց Աքիա, սակայն թագադրությունը չիրականացավ, քանի որ Կոնստանդնուպոլսի թագադրության պաշտոնը հանձնվեց Մայնի արքեպիսկոպոս Կոնստանդին: Լեւոնը կրկին հուսախաբություն ապրեց, սակայն կնճիղ շուտով վերացավ: Լեւոնը, որ 1190-ից արդեն թագավոր էր ընկալվում, ի վերջո 1198 թվի հունվարի 6-ին Տաթևում թագադրվեց՝ Մայնի Կոն-

րադ արքեպիսկոպոսի կողմից: Լեւոն Ռուբինյանն անպայման կամենում էր թագադրվել գերմանական կայսեր կողմից, քանի որ գտնում էր, որ արեւմտյան այդ տերությունն ունեւ է, քան արեւելյան պետությունները, ուստի կամենում էր ձեռք բերել նրա հովանավորությունը:

Պարզվեց, որ Կոնստանդնուպոլսի արքեպիսկոպոսը մինչեւ թագադրվել կամենում էր եկեղեցական խնդիրներ բարձրացնել: Ըստ նրա՝ տերունի եւ սրբոց տոները պետք է կատարել հաստատուն թվերով, որը հարվածում էր հայոց յոթնեկական ցրությանը: Ժամերգությունները պետք է կատարվեին եկեղեցում, այն դեպքում, երբ հայերը ժամերգությունը կատարում էին գավթում: Տննության եւ Զարկության ճրագույններում գործածել միայն ծով եւ ձեռք եւ ոչ թե կոթեղ եւ կաթեղներ: Ներսես Պալինեցին հիշում է նաեւ այլ պայմաններ, բայց դրանք բոլորն էլ, ըստ էության, արտաքին պայմաններ էին: Կար նաեւ դրամական պայման, որը, ըստ երեւույթի, ընդունվեց:

Պայմանների առիթով Լեւոնը կանչեց կաթողիկոսին եւ եպիսկոպոսներին եւ հարցրեց, թե ինչ պատահանել: Ըստ երեւույթի, այդ առիթով Տաթևում հրավիրվում է եկեղեցական ժողով՝ Ապիրատ կաթո-

ղիկոսի կողմից, որը Լեւոնի պահանջով միութենով պետք է հավանություն տար: Ժողովը, որ հրավիրվեց 1197-ին, հարթ չընթացավ: Կաթողիկոսն ու եպիսկոպոսները սկզբում հրաժարվեցին դրանից, քանի որ, բացի նշված կետերից, որոնք առանձին կարեւորություն չունեին, եղել են, թերեւս, նաեւ այլ ընդունելի պայմաններ: Տեսնելով այդ թագավորի դառնալ պատրաստվող Լեւոնը, որին պետք է օծեր եւ թագադրեր Կոնստանդնուպոլսում, որը թե հայոց կաթողիկոսը, որոշեց ընդունել պապի նվիրական պայմանները եւ անգամ հավանել տվեց դրանք եպիսկոպոսներին, որոնք երրորդ տվեցին: Պետք է ենթադրել, որ պապի նվիրակը հավանաբար պայմանների մի մասից հրաժարվեց, եւ այդ ժամանակ եպիսկոպոսները տվեցին իրենց համաձայնությունը, որն ստորագրեց ընդամենը 12 եպիսկոպոս: Դրանք մեջ էին Տաթևի Ներսես Լամբրոնացի, Անտիոքի, Սսի Զովհաննես եւ Անանիա Սեբաստացի եպիսկոպոսները: Այս ամենից հետո Լեւոն Ռուբինյանը Տաթևում մեծ հանդիսավորությամբ օծվեց ամենայն հայոց թագավոր: Թագադրության հանդեսներին մասնակցում էր երկրի շուրջ 5 տասնյակ ավատատեր՝ աշխարհիկ եւ հոգեւոր: Լեւոն Ա Ռուբինյան թագավորին ուղեկցում էին հայ եւ գերմանացի խիզախ ասպետները: Հայոց թագավորը բարձր էր գնահատում գերմանացի ասպետների մարտական խիզախությունը, եւ վերջինս ունումնասիրությունների համաձայն՝ ինքն էլ դարձել էր Տեւոնական միաբանության անդամ:

Կալկարայի հայոց ճեմարանում

Մարտի 24-ին Մեծ Եղեռնի 92-ամյակի կապակցությամբ Կալկարայի Ս. Սազարեթի հայկական եկեղեցու բակում տեղադրված հայոց ցեղասպանության 50-ամյակին նվիրված հուշաքարի մոտ կատարվեց հոգեհանգստյան արարողություն՝ բյուրավոր նահատակների հոգիների խաղաղության համար:

Հոգեհանգստից հետո բոլոր ներկաներն ուղեւորվեցին Մարդասիրական ճեմարան, որտեղ ներկա գտնվեցին ճեմարանի սաների կողմից ներկայացված հուշ-ցեղեկություն՝ նվիրված հայոց ցեղասպանությանը: Մասնակիցները ելույթ ունեցան ցեղասպանությանը վերաբերող գեղարվեստական, ամուսնով եւ երաժշտական կատարումներով: Միջոցառման ավարտին խոսք ասաց Զարուհյան սրկ. Համբարձումյանը՝ եւս մեկ անգամ ոգեկոչելով ցեղասպանության անմեղ զոհերի հիշատակը եւ բարձր գնահատելով ճեմարանի սաների ու հանդիսության կազմակերպիչների տնայնաց աշխատանքը:

Հանդիսությանը ներկա էին հնդկահայոց եկեղեցական խորհրդի անդամներ, ճեմարանի դասախոսական ուղեկազմը, համայնքի ներկայացուցիչներ, հյուրեր եւ սաներ:



Շարունակելի

Բաբկեն ՀԱՐՈՒՅՈՒՆՅԱՆ

ՀՀ ԳԱՄ թղթակից անդամ, պրոֆեսոր



«Ե՛ր Բանն մարմին եղեւ եւ քնակեաց ի մեզ» (Յովհ. Ա 14)

Բանն Աստված մարդացավ, «մարմին եղեւ» ու քնակվեց մարդկանց մեջ...

Աստվածային Երկրորդն անկասկածելի, արարչական խորհուրդներն անհասանելի են ոչ միայն հոգևորներ, այլև անկյուղ արարածներին: Այսպիսին է նաև Բանի մարմնացումն ու Աստծո մարդեղությունը՝ «խորհուրդ մեծ եւ քնակեցի»:

Աստված մարդացավ... Ոչ թե կարոտ էր մարդացման, այլ էր անբավ մարդասիրությունը մղված, որով ստեղծեց զգալի եւ իմաստլի աշխարհները, մարդ դարձավ, հազավ մարդկային բնություն, ընդունեց ծառայի կերպարանը, որպեսզի արարածներն հաղորդակից լինեցին էր անհատիկի աստվածությանը, մեզ խոստացավ փրկություն եւ օրհնեց հույսը խաղախեանակյան կյանք: Պետք էր՝ Աստված խոնարհվեր, որպեսզի մարդը բարձրանար՝ նման Ս. Աթանասի Նշանավոր մտքի: «Աստված մարդացավ, որպեսզի մարդին աստվածանայ»:

Աստված մարդուն բազ էր պակս ստեղծեց որչ արարչության համար: Նրան պատվեց էր նմանությունը՝ շնորհելով անմահ հոգի, բանական միտք եւ անձնիշխան կամք, որով ազատորեն ընտրելով է բարին կամ չարը: Եվ որովհետեւ մարդն էր ազատությունը հետեւեց չարի պատրաստներին, դատապարտվեց Աստծո արդարությունից եւ պատվեց մահվամբ: Աղա՞մի որդիների մեջ չկար այնքան արդար մեղք, ով կարողանար ուղեղի կանգնեցնել անկախ մարդկությանը: Չկար նաեւ այնքան համարձակ մեղք, ով կարողանար վերացնել դատապարտության վճիռը, որով նախատեսվածին արտաքսվեցին «Կափկություն» դրախտից:

Սկզբը՝ էջ 6

Միեւնույն է՝ հարստությունը շատերի մեջ ակնհայտ էր առաջացնում նյութական ունեցվածքի նկատմամբ, եւ պատահական չէ, որ մարդկության մեծ մասն այսօր բռնված է այդ հրապուրիչ ախտով՝ հաճախ նույնիսկ չգիտակցելով, թե ինչպես ապրելու պարզ միջոցը՝ նյութական բարիքը, առավել ու ազատ է հարստակալու մարմնաշղկ կյանքով, դարձել է ոչ միայն նպատակ, այլև պարտադրանք: Պատահական չէ նաեւ, որ այսօրվա աշխարհի իտեսնական ու առեւտրային բոլոր համակարգերն իրականում առաջնորդվում են մի սկզբնականով, հնարավորինս արագ եւ հնարավորինս շատ հարստանալով: Ինչ է սա, եթե ոչ ազգախոթյան մրցավազը...

- Դժոխ սուրբ, ժուժկալության ու չափավորության, անհրաժեշտի ու ավելորդի վերաբերյալ սուր հայերի խորատեսնայ սյուր շատերին չէ, որ կարող են համոզել: Ինքնորոշ առաջիկ, որ դժվար է ճանաչել սահմանը, մարդիկ, իրենց անգամ նվազագույն կենսակերպի ապահովելու համար միջոցների պտեղ ունեն:

- Երբեք չպետք է ընկնել ծայրահեղությունների մեջ: Իհարկե, չի կարելի անտեսել միջավայրն ու կենցաղը: Իսկինքն էլ, թե որքանով ենք տուրք տալիս այս ամենին, այնքան՝ դարձյալ հանգում ենք չափավորության գիտակցությանը: Մյուս կողմից՝ յուրաքանչյուր ճշմարիտ քրիստոնյա, առանց ղուլակ-ինչ մեղակելու իր հավատքի եւ սկզբունքների, կոռնաբարոյական արժեքների առաջ, նաեւ մարդկանց շրջանում գայթակհության առիթը չտալու համար, ըստ անհրաժեշտության, կարող է աշխարհին ներկայանալ ինչեք աշխարհի «գուլներով» ներքուստ, սակայն, կոնելով իր խաչը: Ասածին դասական օրինակն է սբ Դովհանեսն Օձնեցի հայրապետի հետ կապված հայտնի իրադրությունը: Դիշո՛ւմ էջ՝ 8-րդ դարասկզբի մեր

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՆՈՒ ԵՐԻՍՏՈՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՓՐԿՁԻ ԱՄԱՐԴԵՂՈՒԹՅԱՆ ԱՄԱՆԻՆ

Սատանան չարախոսում էր, թե մարդիկ բնությունն են ոչ թե ազատ կամքով են մեղակելու: Միանույն նախ մեղադրում էր Աստծուն, թե ինչու՞ մարդկանց մեղահախ բնությամբ ստեղծեց, որով հանապազ մեղանշում էր: Ու չկար մեղք, որ բռնեք չարախոսի ստորը, քանզի մարդկանց մեջ չգտնվեց անմեղ: Աղա՞մից մինչ Զրիստոսը բոլոր մարդիկ դժոխքում գերված էին չարի կապանքներով: Մարդն իր անհնազանդությամբ մերկացավ «Եթեբնություն» շնորհներից ու «Երկրորդասան» պարգեներին: Չրվելով ու իսկավարելով աստվածային գերապայծառ լույսից՝ իր եւ Արարչի միջեւ անհաշտ թշնամություն սերմանեց: Մահն օրցատորն զորացավ եւ իսպառ կյանք մարդկային բնությունը: Ոչ ոք չկար, որ կարողանար մահվան կապանքներից խլել մարդկությանը, քանի որ ամենքն էլ դարձան մահկանացու, զի «վարձք մեղաց մահ են» (Հոռոմ. 2: 23): Մեռան Աղա՞մից բոլոր ծնվածները, հող ու փոշի դարձան՝ համաձայն տերունական հրամանի, թե «հող էիր եւ ի հող դարձցիս» (Յննդ. 9: 19): Եվ ոչ ոք չունեք հույսը հարության: Մեռան ոչ միայն մարմնով, այլ, որ ստակալի է, նաեւ հոգով: Կին թե տղամարդ, ծեր թե մանուկ, հարուստ թե աղքատ, մի խոսքով՝ բոլորը դարձան մեղքի ստրուկը՝ հնազանդորեն ծառայելով դրան, ինչպես ստում է Ս. Գրիգորը. «Ամենայն ոք խորհրդ էր սրտի իրում խնամով ի չարիս գամեանայն սուրբ» (Յննդ. 2: 5), նաեւ՝ «Ապականեցաւ երկիր առաջի Աստուծո, եւ լցաւ երկիր անիրաւութեամբ» (Յննդ. 2: 11), եւ թե՛ «Միտք մարդոյ հաստատեալ է ի խնամ չարի ի մանկութեն իւր» (Յննդ. 2: 21): Եվ քնակ չգիտենի Աստծո արդար դատաստանի մասին, որը սրի նման կախված ունեին իրենց գլխավերելու:

Առաջին Աղա՞մի մեծ ժառանգությունն թողեց մարդկային եղծված ու ապականված բնություն, որը կրեց ամեն մի աղամորդի: Պատվիրանազանությունը նախաձեռնողներն իսկույն հոգով մեռան. «Յորում ասուր ուտիցեք ի նմանե, մահու մեռանիցիք» (Յննդ. Բ 17): Ապա շատ տարիներ անց մեռան նաեւ մարմնով՝ համաձայն արարչական հրամանի, թե «հող էիր եւ ի հող դարձցիս» (Յննդ. 9: 19):

Արդ, «Բանն մարմին եղեւ եւ քնակեաց ի մեզ»: Աստված, որ հույզ արդար էր իր արարածների նկատմամբ, վկայեցավ մեղավորի մահը, այլ մեղքերից նրա դարձն ու ապրելը:

Ուստի ծնվեց մարդուց իբրեւ Մարդ եւ արարացրեց մարդուն իբրեւ Աստված: «Եւ Բանն մարմին եղեւ», որպեսզի մարմնավորներին ազատի անձեղի դատապարտությունից՝ անձեղ դառնալով մեզ համար: Կատարյալ Աստված դարձավ կատարյալ Մարդ՝ «հոգով եւ մտքո եւ մարմնով», կրեց մարդկային բոլոր կրքերը՝ բացի մեղքից: Խցեց բանասերկուի ստախոս քերանը, որն ասում էր, թե մարդիկ բնությունը են մեղակելու, ուստի երանակ չեն պատժի, քանզի Աստված նրանց այդպես է ստեղծել: Աստծո միաձին Որդին էր անմեղ մարմնով խաչի վրա չորր մատուցած հաժիտեանական Պատարագով եւ իր անապական մահվամբ պատուեց մահացու մեղքերի պարտամորիակը: Բանի մարդեղությունը միայն Աստված հաշտվեց մարդու հետ: Ամսահ Աստված, վերցնելով մեր մահկանացու բնությունը, մեռավ մարմնով՝ մնալով անմահ, որպեսզի մեզ՝ մեռածներին, շնորհի մահախոթություն. «Ո՛րք է յաշխոթիսն քո, մահ. ո՛րք է յաշխոթ քո, դժոխք» (Ուվե՛ք ԺԳ 14): Զանգի «որպէս Աղաման ամենեքին մեռանիս, նույնպես եւ Զրիստոսիս ամենեքին կենդանացին» (Ա Կորնթ. ԺԵ 22): Աստծո մարդացումը գծեց մարդու աստվածացման ուղին: Աղամական անկեղանք բնությունը սորոգվեց Զրիստոսի մահվամբ:

Մահը լիմում է երկու տեսակ, այսինքն՝ հոգու եւ մարմնի: Կրկնատեսակ է նաեւ կյանքը: Զոգին բնությունը անմահ է, քանզի պատկերակցի է նմանակից է անմահ Աստծուն: Իսկ հոգու մահ կոչվում է մեղք, որով այն, տարագրվելով Աստծուց, դառնում է մեռյալ: Որովհետեւ ինչպես հոգին մարմնի կենդանությունն է, այնպես էլ հոգուն՝ Աստծո Զոգին, Որից բաժանված է մեղքով: «Ես եմ ճանապարհին եւ ճշմարտության եւ Կենսան» (Յովհ. ԺԳ 6) եւ «Դա՛նք Կենսան» (Յովհ. 2: 35),- ասում է Աստված:

Արդ, Զրիստոսն էր առաջին զալտյալը կենդանացրեց մարդու հոգին, իսկ երկրորդ զալտ-

յալը հարություն է տալու նաեւ մարմնին՝ «յալտուր յալտուրեան եւ միս անգամ զալտեան»: Ուստի «Բանն մարմին եղեւ եւ քնակեաց ի մեզ», որպեսզի մեզ քնակեցին Զոր մեջ: Սակայն անկասկած էր, որ Զայր մարմնանար, քանզի անկեղք է, այլապես ոչ ոք չէր լինի առանց սկզբի: Իսկ եթե մարմնանար Սուրբ Զոգին, ապա կատարվեր երկու Որդի: Այլ «Բանն մարմին եղեւ», եւ աստվածության երեք անձեղը միացին անշխոր: Աստծո միակ Որդին «ի յուրմն ժամանակաց» իջավ Ս. Կույս Մարիամի աննստաբար արգանդը: Այնտեղ ժուժկալելով ինն ամիս եւ ինկն օր՝ վերցրեց նրա անարատ արյունից եւ «միարդեաց ընդ Իւրում Աստուածութեանն»: Եվ «Բանն մարմին եղեւ»՝ հոգով, մտքով եւ մարմնով՝ «մի անձն, մի դժեւ միարդեալ մի բնութիւն»: Աստված մարդացավ անփոփոխ եւ անալալ կերպով՝ «աններսն յորդիսն եւ անապական ծնուցաւ»: Եվ քանի որ մարմնով ծնվածն Աստված է, հետեւաբար Մարիամն «աստուածածին» է՝ մնալով «միշտ Սուրբ Կույս»:

Ցավալի է, սակայն բոլոր դարերում էլ գտնվել են «ոմանք չարախոթ», ովքեր խաթարելով ուղղափառ միտքը՝ ջանացել են պոտորել Ս. Եկեղեցու վճիռ աղբյուրը: Միանգ ղաժկաղի ձգտումներն իրենց անփառունակ վախճանին են հասնում տարբերակ հերձվածապալան խոսքով:

Շարունակելի
Պատաստեց Արմեն սրկ, ԿԱՅՐՏՐԱՆԸ
Գեորգյան հոգեւոր ճեմարանի
է յաթարի սան



ԱԳԱՆՈՒԹՅՈՒՆ



Երեսուն կաթողիկոս ինչպիսի՞ ջոճը հասնորձներով էր ներկայանում ժողովրդին՝ հատկապես տոների ժամանակ: Իսկ ալե-

խառն մորուքն օծում էր ոսկեփոշով ու վարդաբով: Եվ սա՞՝ արարների տիրապետության տակ սուկուղ Դայաստանում... Նույնիսկ սուլթանն էր զարմացել, թե ինչպես էր, որ հայոց հայրապետը շրջում է նման շքեղաշուք տեսքով, միկեղեք Զրիստոսը եւ նրա աշակերտները պարզ ու անշուք հագուստներ էին կրել: Եվ երբ սուլթանն այս բանը պարզելու համար հայոց հայրապետին հրավիրեց իր պալատը, Օձնեցին, ի պատասխան սուլթանի հարցումի, ասաց, որ ինքը պատկառագորու տեսքով է ներկայանում իր հոտին, քանի որ զուրկ է այն գործություններից, որոնցով օծված էին Աստվածորդին ու նրա աշակերտները: Եվ այս խոսքերի հետ ետ տանելով շքեղ հանդերձները՝ սուլթանին ցույց տվեց իր խարազնագործ չափիկները, որ կրում էր ներսից՝ մերկ մարմնի վրա: Տեսնելով այդ պատկերը՝ արար առաջնորդը ցնցվեց եւ խոնարհվելով Օձնեցու աղետի՝ խնդրեց նրա օրհնությունը:

Միա իմաստության հիսնալի մի օրինակ, որից շատ բան ունեցե սովորելու նաեւ այսօր. հաշվի տանելով ճարտարական իրաճիճակ եւ ժամանակը՝ հայոց հայրապետն արտաքուստ որոշակիորեն ընդառաջ էր գնացել անհրաժեշտությանը՝ ներքուստ, սակայն, կրել իր մշտական խարազնագետությունը՝ որպես գգաստության ու սակավապետության կնիք:

Այնպես որ, կարելուրն ավելորդին՝ չարիքին, ներքուստ տուրք տալու է եւ մշտական գոհունություն՝ չլինի թե աննկատ կերպով ընկնեց չարի որոգայթը:

«Գանձեր մի՞ դիճեք Երկրի վրա,- ասում է Զրիստոսը,- այլ էրկերում, քանզի ուր ձեր գանձերն են, այնտեղ է ձեր սրտերը կլինեն» (Միմտ. Մատթ. 2: 19-21): Այսինքն՝ ցակացած երկրային գանձ, որ դիգվում է, կու-

տակվում է, ծանրացնում է մարդու սիրտը, այն կապում այս մեղավոր աշխարհին, կտրում երկնքից: «Ազաից, եթե սրտում գանձեր չունի, գանձերն են իրենց մեջ շրջալեզ ազաի սիրտը,- ասում է Պողոս պատրիարք Արիանականությունից,- ուստի երբ գանձերը կորչում են, կորչում է եւ նրա սիրտը, եւ անկեղան է մնում, որովհետեւ ազաիների կյանքը նրանց գանձերն են»:

- Յուրաքանչյուր մահացու մեղք առավել բխտալի է իր հետեւանքներով՝ իրենից քիտել այնպես մեղքերով: Այս առումով բացառություն չէ նաեւ ազաիությունը: Որո՞նք են ազաիության առավել հետեւանքները հոգու եւ մարմնի համար:

- Դրանք բազմաթիվ են եւ մեկը մյուսից գաղթելի՝ խաթարություն, անիրավություն, հափշտակություն, մեծավորին գրկել, ընդհուպ միկել սպառնություն, մատուցություն եւ այլն... Սակայն ազաիության այնտի ամենաչար արգասիքը, թերեւս, անգթությունն է, անողորմությունը: Եվ սա ոչ թե ողորմություն կամ բարի գործ չանելն է սուս, այլ քիչ առաջ ինչառակված՝ սրտի կորուստը, սրտի ներքին չար որակը: Սակայն նմանակը թող չմոռանան, որ «անողորմների անողորմ դատաստան է լինելու» (Դալ. Բ 13): Եվ նրանք ու մեկը բոլորս միշտ ինչեքն են այս բառերով, նրանք անապական կնկնելն ու կկշտանան՝ այն ամեն խոսքով, որ դուրս է գալիս Աստծու քերականից» (Մատթ. Դ 4):

Զյուրբակյեց
Դայկ ԿԱՐԱԴԵՅԱՆԸ

ԻՌԱՆՆ ՏՈՐՈՒՍԿԻ

Սկզբը՝ թիվ 2-7

Երբ Դավիթը բազմավոր փախչում էր իր դեմ ապստամբած իր անհնազանդ որդի Արեսաղոմի երեսից, Սափուղի ցեղից մի մարդ Սեմեին անունով, Դավիթից առաջ վազեց և սկսեց նրան դաժանազան բառերով անարգել։ «Հետացիր, հեռացիր, մարդասպան, ածորեն»։ Տերը քեզ վրա է քերել Սափուղի տան ամբողջ արյունը, որովհետև նրա փոխարեն դու բազմավորեցիր։ Տերը բազմավորությունը տվել է քո որդի Արեսաղոմին, և դու զորքատարության մեջ ես, որովհետև դու աշխարհաբար մարդ ես (Բ Թազ. ԺԶ 5-8)։ Ահա՛ մարդկային չարությունն աշխարհից օհրհման։ Դավիթը այսպես անարգելը տեսնելով՝ գործադրամատար Հովադի եղբայր Արեսաղն ասաց. «Ինչո՞ւ է այս աստված շուն անիծում իմ տեր արքային։ Գնամ, նրա գլուխը կտրեմ»։ Բայց բազմավորը, իր այսպիսի անարգանք մեջ տեսնելով Աստծո թույլտվությունը, պաշտպանեց իրեն հետապնդողին՝ ասելով իր ուղեկցներին. «Թողե՛ք նրան, քո ճակատի այդպես, քանզի Տերն է նրան ասել, որ անիծի Դավիթին։ Եվ ո՞վ կարող է ասել ինչո՞ւ այդպես արեցիր»։ Սեմեին մեծ հանգամանք գործեց՝ Դավիթին անիծելու, որովհետև, թեև Աստված նրան գործածեց իբրեւ գործիչ՝ բազմավորին անարգելու համար, սակայն Սեմեի չար կամքի պատճառով չէր։ Նա պարզապես իմաստուն կերպով գործածեց այն՝ Դավիթին պատժելու համար։

Մեզանից յուրաքանչյուր Դավիթի պես պետք է մայի չար մարդկանցից իրեն հասցվող հարվածներին ու թշնամությանը. այդ մարդկանց կամքը անմեղորդ Աստված գործածում է կամ անհնազանդներին խրատելու, կամ մեղավորներին պատժելու համար։

Մը Դոդրեթուր պատմում է, որ աստվածահաճու կյանքով ապրող մի ձեր մի քանի

ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ՆԱԽԱՆԱՍՏՈՒԹՅՈՒՆ

օրվա ընթացքում չէր կարողանում կերակուր ընդունել հիվանդ ստամոքսի պատճառով։ Նրան սպասանորոգը, կամենալով ձերկել կերակուր տալ, մտածում է նրա համար պատրաստել ավելի համեղ ու անդարար կերակուր։ Կերակուրը պատրաստելու համար՝ իրար ճմամ երկու ամաններից մա սխալմամբ վերցնում է այն մեկը, որում պահվում էր փչացած հին ձեթ։ Այսպիսով չնայած ձեթին հաճույք պատճառելու իր բարի ցանկությունը՝ նա, նրա կերակրի մեջ մեղրի փոխարեն փչացած ձեթ առատորեն լցնելով, նրա համար այնպիսի կերակուր է պատրաստում, որը նույնիսկ քաղցած շունը չէր ուտի։ Հիվանդը հենց փորձում է իրեն մատուցված կերակուրը, իսկույն հասկանում է, որ այն պատրաստողը սխալ է թույլ տվել, սակայն լուռ է և դժվարությամբ ուտում։ Հետո, երբ ստամոքսն այդքան ի վիճակի չի լինում այն ընդունելու, գլուխ դնում է առանց կերակրի անպիտանության մասին որեւէ բան ասելու։ Սակայն ծառայողը սկսում է նրան համոզել, որ ավելի շատ ուտի այդ սքանչելի կերակրից՝ ասելով. «Ես այն մեծ եռանդով ու սրտանց եմ պատրաստել, այն քո առողջությունը կամրապնդի»։ Բարի ձեռք ու միայն ոչ մի բարկացուցու խոսք չի առում ծառայողն, այլևս նույնիսկ մտքում չի քարկանում և կերակրից երաժարվում է միայն ասելով. որ արդեն հագնեց է և այլևս չի կարող ուտել։ Այդ ժամանակ ծառայողը, ինքն էլ կերակուրը բերանը տանելով, իսկույն ընկնում է ձեթի ոտքերն ու դառնություն ասում. «Սպանեցի քեզ, ազնիվ հայր, ինչո՞ւ եր լուրջաբար քաղցրի իմ անդառնալի սխալը»։ Մի խոսովվիր, որդյակ իմ, եթե Աստված համբը, որ ես քաղցր բան ուտեի, ապա դու ինձ քաղցր բան կրեցիր»։ Այստեղ ար Դոդրեթուր նշում է, որ ձեթը ճիշտ է ասել, որ եթե Աստված կամենար, որ իշկված ձեթը համեղ կերակուր ուտեի, ապա

թույլ չէր տա, որ ծառայող եղբայրը սխալվեր, կամ էլ փչացած ձեթը կարծրացներ։ Այսպես՝ այս ձեթի պես է վարվում ամեն ոք, ով ամեն ինչում ճանաչում է Աստծո նախախնամությունը։ Նա ոչ մեկի մեջ չի կամենում տեսնել չարատություն, ոչ որի չի կասկածում, այլ իսկապես ընդունում է, որ իր հետ պատահող ամեն ինչ Աստծո նախախնամությամբ ու կամքով է լինում։

Կոտսանդնուպոլսում հույն քաղաքի Իրենեն, մի անարգ ծառայի ձեռքով գահընկեց արվելուց հետո, դիմում է Աստծուն հետևյալ խոսքերով. «Շնորհակալ եմ Հեզ, Տեր, որ Դու ինձ՝ անարժան որդիս, բարձրացրիր քաղաքական գահին։ Սակայն քանի որ Դու Ինքը թույլ տվեցիր, որ ես դարձից գրկվեմ, համարում եմ դա իմ մեղքերի հետևանք։ Թող Հեզ կամքը կատարվի ինձ համար։ Թող ամեն չար ու քարի բանի մեջ Տիրոջ անունն օրհնյալ լինի»։ Գնդարիտ է այն, որ ոչ ոք մեզ վնասել չի կարող, եթե մենք ինքներս մեզ չվնասենք։ Ուստի իրավացիորեն է երանելի Օգոստինոսն ասում. «Հավատա՛ Տեր Աստծուն առանց որեւէ կասկածի և քեզ ամբողջապես Նրան հանձնիր, որքան կարողություն ունես, եւ այդքան՝ Նա քեզ չի մերժի, չի դադարի քեզ Իր մոտ բարձրացնելուց և ոչ մի չար բան թույլ չի տա քեզ համար, քեզվուր ու լինես աղքատ ու անմեղ մեղք»։ Այս խոսքը յուրաքանչյուր որ պիտի կատարելապես իմանա և ամուր մտապահի հետևյալը. առանց Աստծո կամքի կամ թույլտվության ոչ մի վատ բան չի կարող մեզ պատահել, ոչ սատանան, ոչ էլ որեւէ մարդ չի կարող մեզ վնաս հասցնել, եթե Աստված թույլ չտա։ Պետք է սրտանց հավատալ, որ բեւե ամենամաճող դժբախտություններն անգամ մեզ պատահում են Աստծո՝ որպես գերազույց թաղավորի, տնօրինությանը, սակայն դրանք մեզ ուղարկվում են ողորմած Հորից



մեր օգտի համար՝ մեզ խրատելու և ուղղորդելու բերելու համար մեր կեղծիքների ու մեղքերի պատճառով։ Հետևաբար, ոչ ոք չի կարող մեզ վնասել, մեզանից բացի։

Շարունակելու

Թարգմանություն՝ Ս. ՍՍԱՐԴՆԱՅԱՆ

«Խաղաղություն-Ա» երիտասարդական հասարակական կազմակերպությունը եւ կարիքավոր խավը

1999 թ. փետրվարի 6-ին Էջմիածին քաղաքում տեղեկեց «Խաղաղություն-Ա» երիտասարդական հասարակական կազմակերպությունը։ Այն ոչ շահութաբեր, ոչ քաղաքական կազմակերպություն է։ Մտեղծման օրվանից այն աջակցում է անապահով, հաշմանդամ, ծնողազուրկ երեխաներին։ Կազմակերպությունը նաեւ իր ակտիվ աջակցություն է բերում չվստահված երեխաներին մկրտելու գործում։

Կատարված աշխատանքներն են՝

1. 1999 թ. մայիսի 1-ին «Խաղաղություն-Ա»-ն Հայ Առաքելական եկեղեցու «1700-ամյակի» գրասենյակի եւ մի շարք այլ հասարակական կազմակերպությունների հետ մասնակցություն ցուցաբերեց մարտի և եկեղեցիների միջազգային մաքրմանը եւ քարեկարգմանը։

2. 1999 թ. դեկտեմբերի 11-ին Լոյս Ցորից «Արմենիա Բեիորեթ» հայկական շաքարաթերթում առաջին անգամ տպագրվեց կազմակերպության գործունեության մասին։

3. 2002 թ. դեկտեմբերի 22-ին «Խաղաղություն-Ա»-ն Ֆրանսիայի արտակարգ եւ լիազոր դեսպանի ներկայությամբ մկրտեց 65 անապահով ընտանիքի երեխաներին։

4. 2007 թ. մարտի 15-ին, շարունակելով իր առաքելությունը, մկրտեց ևս 10 երեխան։

Այն կազմակերպություններին, որոնք կցանկանան համագործակցել «Խաղաղություն-Ա» երիտասարդական հասարակական կազմակերպության հետ, խնդրում ենք դիմել ք. Էջմիածին, Աթուրյան 24 շ., 18 բ. հասցեով, հեռ. (0231) 4-84-00

Email peace-a99@yahoo.com

Մեղսորդություն ԻՌԱՆ



Սկզբը՝ էջ 5

Երանելի Հովհաննեսն ու ճգնավորները սկսեցին իրար մեջ խորհել ու ասել, որ այս եղբայրը մեծ մարդ է և կարող է բարեպաշտության թոխչներ գործել։ Եվ երանելի Հովհաննես Կարճիակ արդեն նրան իր խոցը տարավ և սկսեց տողերեցել վաճակա՛կ կնար։ Եվ իսկապես էլ նա դարձավ մեծն Արսենը՝ լցված Սուրբ Հոգու շնորհներով։

Ես սա ձեզ անապատաբանների կյանքից օրինակ բերեցի։ Իսկ այժմ կերեմ մեկ այլ օրինակ, թե ինչպես մարդիկ, աշխարհում ապրելու, հասել էին հոգեւոր հնազանդության այնպիսի մի վերելքի, որ թույլ էր տվել նրանց քայքայման առաջին կատարելության աստիճաններով։

Մի անգամ երանելի Անտոն Մեծին մի ծայր ասաց. «Անտոն, ահա դու այդպես էլ շխատար Արքայանդրայում ապրող այն կաշեգործի հոգեւոր կատարելությանը»։ Այդ ժամանակ երանելի Անտոնը, որ մշտապես ջանում էր իր սրտում տեղ տալ այն բոլոր առաքինություններին,

ՀՊԱՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԽՈՐԱԲՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

որ գործվում էին ոչ միայն անապատականների, այլև բնիհարապես ուժգեղ բրիտանյայի կողմից, բողեց անապատը և ուղեւորվեց դեպի Ալեքսանդրիա։ Հասավ այդ քաղաքում քաղաքում ու աստվածային ցուցումով գտավ այն տունը, որ ապրում էր կաշեգործի, նա, ով իր առաքինություններով գերազանցում էր երանելի Անտոնին։ Եվ ահա նա մտավ այդ տունը և խոնարհվելով կաշեգործի առջե՛ք՝ ասաց. «Ասա՛ ինձ, մարդ Աստծո, թե ինչ հեղուկություններ ես գործում այստե՛ղ՝ աշխարհում, որ ես հանում քեզ եկել հասել եմ այստե՛ղ՝ բողեցելով անապատը։ Ասա՛ ինձ, թե ինչպես ես դու կատարում քո փրկության գործը»։ Այս խոսքերից զարմացած Աստծո ծառան պատասխանեց նրան. «Աբբա՛, ես ի՞նչ հեղուկություններ կարող եմ գործել աշխարհում։ Գնմում աշխատանքի, խորհելու ոչ մի քարի բան չեմ անում, բացի այն, որ ամեն անգամ, երբ վեր եմ կենում գիշերային իմ անկողնում ու գնում աշխատանքի, խորհելու եմ. «Տեր Աստված, բողեց այս քաղաքում փրկվելու եմ, քանզի նրանք արդար գործե՛ն եմ կատարում, իսկ ես միայն եմ, որ որպես անօրեն՝ պիտի կործանվեմ։ Աստված իմ, ողորմի՛ր ինձ։ Եվ դա ես անում եմ ողջ օրվա ընթացքում ու երբ գալիս եմ բնելու, կրկին խորհում եմ, որ բողեց կարծանաման Աստծո արքայությունը, եւ միայն եմ ձեզ գրկվելու այդ փառքից»։

Զարմացավ Մեծն Անտոնը և իր խոնարհությունը բերելով կաշեգործին՝ ասաց. «Իրապես, դու՛ որպես մի քարի անկողնում, տանը մտած ձեռք ես բերել Աստծո Արքայությունը։ Ես, երկար տարիներ գտնվելով անապատում, տարիներ շարունակ գործից գործ, պահից պահեք, ժուժկալությունից ժուժկալություն գործադրելով, դեռեւս չեմ հասել հոգու մեծն վիճակի, ինչից դու ես հասել»։

Ահա՛, փրկելի՛ եղբայրներ ու թույրեր, օրինակն այն բանի, թե ինչպես մարդիկ, ապրելով աշխարհում, հաճո՛ւ եմ դարձել Աստծուն ոչ այլ ինչով, եթե ոչ խոնարհությամբ։ Իսկապես էլ՝ արտառող չոյն չկա այստեղ, մի սրան տեսեք, ընդամենը մտածել, որ բողեց բարի եմ, իսկ մեք դա ես վաճում եմ։ Իսկ ես կասեի, որ դա իսկապես ի՞նչ փրկելու ճանապարհ չէ մեզ ու ձեզ համար, դա ընդունելի միջոց է։ Դա մեզանից առանձնապես

հեղուկություն չի պահանջում։ Ընդամենը ինքը քո ներսում պետք է հասնես այն անկեղծ գիտակցությանը, որ այնուամենայնիվ մենք մեղավոր մարդիկ ենք, եւ սա արդեն մեծ բան է։ Եվ ո՞չ միայն ասել, որ ես մեղավար եմ։ Ո՛չ, դա բավական չէ։ Իսկ ահա հասնել գագաթնմանից այն լիարժեք գիտակցությանը, որ իսկապես ընդունեմ, որ մեղավար մարդիկ ենք, եւ եթե մեղավորներ ենք, ապա չենք կարող որեւէ մեկի անվերապահորեն դատել, վրդովել, հակաճառել կամ առարկել, առավել եւս՝ բարկանալ կամ զայրանալ որեւէ մեկի վրա։ Իհարկե՛ ոչ։ Իսկ եթե մենք ընդունեմք այն, ինչի մասին արդեն ձեզ հետ միասին լսեցինք, եւ ջանաք այն իրականացնել մեր կյանքում, այսինքն՝ մերժեմք հպարտությունն ու ընդունեմք իրական հոգեւոր խոնարհությունը, ապա հավանաբար, հակառակ, կհաջողենք փրկության մեր ճանապարհին։

Եվ այսպես՝ Աստծո օգնությամբ մեր սրտերում ամբարներ քարին քարու վրա եւ հոգեւոր կատարելության աստիճաններով բարձրանա՛մք ու հասնեմք հավիտենական կյանքին՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսով, Որին Հոր եւ Սուրբ Հոգու հետ միասին վայել է փառք ու պատիվ հավիտյան հավիտեցից։ Ամեն։

Թարգմանություն՝ Սյուզաննա ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԵՐԻՍՏՈՆՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

Կրկնական, մշակութային, լրատվական երկշաքաթաթերթ

Հիմնադիր՝

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Հրատարակիչ՝

«Երիտասարդ Հայաստան» թերթի

խմբագրություն

Գլխավոր խմբագիր՝

Աստուրիկ Ստամբուլյան

Գրանցման վկայական՝ 624

Խմբագրության հասցեն՝

Ք. Կաղարշապատ, ԶԿ

Հեռախոսը՝ (0+231) 54510

Ստոր. տպագր. 2.5.2007 թ.

Տպաքանակը՝ 2500 Գինը՝ 50 դրամ